

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 21.12.2020թ. նիստի

Գիտական խորհրդի արտահերթ նիստը կայացավ էլեկտրոնային կապի միջոցով: Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 37 (երեսունյոթ) անդամներին:

Գիտական խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնող խմբի անունից ռեկտորի ԺՊ-ին ուղղվեց գրություն, որով առաջարկվում էր էլեկտրոնային քվեարկության դնել նախաձեռնող խմբի կողմից մշակված և առաջարկված հետևյալ կոչ-հայտարարությունը՝ պայմանավորված 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում ստեղծված օրհասական իրավիճակով:

Միբեյի՝ հայրենակիցներ,

Մենք՝ ՇՊՀ գիտական խորհրդի անդամներս, որպես անաչառ մտավորականներ, մեր ցավակցությունն ենք հայտնում ադրբեջանաթուրքական ագրեսիայի զոհերի ընտանիքներին, հարազատներին, և հեռու մնալով քաղաքական տարաբնույթ հոսանքներից, գիտակցելով պահի հրամայականը, լինելով մտահոգ՝ հայտնում ենք մեր տեսակետը և ներկայացնում ապագայի տեսլականը:

Սույն թվականի նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի միջև ՀՀ վարչապետի կողմից խիստ գաղտնիության պայմաններում ստորագրված հայտարարությունը գնահատում ենք որպես հայ ժողովրդի համար նվաստացուցիչ մի փաստաթուղթ, որի արդյունքում Արցախի և Հայաստանի Հանրապետություններն ունեն զգալի տարածքային կորուստներ, հայկական զույգ պետություններում և Մփյուռքում ստեղծվել է բարոյահոգեբանական բարդ ու ծանր մթնոլորտ:

Պարտադրված պատերազմում (ռազմի դաշտում և դիվանագիտական հարթակում) մեր կրած ցավալի պարտության պատճառների վերաբերյալ մեր կարծիքներն ու գնահատականները կարող են տարբեր լինել, սակայն մեկ բան ակնհայտ է և անվիճելի, որ այդ ամենի արդյունքում մեր երկրում առկա է խորը ճգնաժամ և քաղաքացիական պատերազմի իրական սպառնալիք:

Ցավով պիտի արձանագրենք, որ ստեղծված պայթյունավտանգ իրավիճակում իշխանությունների գործողություններն անարդյունավետ են և չեն նպաստում հասարակության մեջ առկա լարվածության և ներքին պառակտվածության թուլացմանը:

Կոչ ենք անում հասարակության քաղաքական և ապաքաղաքական բոլոր ներկայացուցիչներին, քաղաքական իշխանությանը, ընդդիմությանը սթափ գնահատել առկա իրավիճակը, գործել բացառապես ՀՀ սահմանադրության և օրենքների սահմաններում, դրսևորել պատասխանատվություն, զսպվածություն և համախմբված ձգտել ազգային համերաշխության:

Որպես առկա ճգնաժամի հաղթահարման ուղի՝

1. պահանջում ենք ՀՀ կառավարության հրաժարականը՝ հանրապետության վարչապետի գլխավորությամբ,

2. կոչ ենք անում ԱԺ-ին դրսևորել պետական մտածողություն, որպես խորհրդարանական երկրի լեգիտիմ օրենսդիր մարմին, սահմանադրական ճանապարհով, ողջախոհության և ազգային համերաշխության պայմաններում ընտրել նոր վարչապետ և ձևավորել բացառապես արհեստավարժներից կազմված հանրային վստահություն ներշնչող ժամանակավոր կառավարություն, որի հիմնական խնդիրը պետք է լինի երկրի ներսում իրավիճակի կայունացումը, բացառապես հայկական գերակա շահի վրա հիմնված արտաքին քաղաքականության իրականացումը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների կազմակերպումը::

Էլեկտրոնային նամակի միջոցով իրենց դիրքորոշումն արտահայտեցին գիտական խորհրդի 27 անդամներ.

- | | |
|------------------------|--|
| 1. Սերոբյան Երվանդ | Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ |
| 2. Ավետիսյան Նազելի | Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ |
| 3. Նիկողոսյան Գագիկ | ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ |
| 4. Սարգսյան Արմենուհի | Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն |
| 5. Խաչատրյան Թերեզա | Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն |
| 6. Պետրոսյան Կարինե | Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար) |
| 7. Պողոսյան Բագրատ | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան |
| 8. Մելիքյան Թամարա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան |
| 9. Հովհաննիսյան Օֆելյա | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան |
| 10. Մարդոյան Ռուզաննա | Մանկավարժության ֆակուլտետի ղեկան |

11. Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
12. Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
13. Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
14. Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
15. Աղանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
16. Խորիկյան Հովհաննես	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
17. Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
18. Սահակյան Կարինե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
19. Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
20. Հայրապետյան Սերգո	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
21. Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
22. Տեր-Աղամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ.,
23. Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
24. Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

25. Հովհաննիսյան Յուլյանա Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
26. Վիրաբյան Ալլա Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
27. Հովհաննիսյան Հռիփսիմե Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

ԼՍԵՑԻՆ՝

2020թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԳԻԱՅԻ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՕՐՀԱՍՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԿՈՉ-ՀԱՅՏԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում ստեղծված օրհասական իրավիճակով պայմանավորված՝ հանդես գալ վերոգրյալ կոչ-հայտարարությամբ.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 1, չի մասնակցել քվեարկությանը՝ 1:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի
քարտուղար

Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ